ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱ ԴԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳՈՒՄ

Ա. Մ. ԹԵԼՈՒՆՑ

Գիտության զարգացման հնարավորությունները, կիրառման մեթոդներն ու եղանակները, հետևաբար և դերն ու նշանակությունը խիստ տարբեր են պատմական տարբեր պայմաններում, տարբեր հասարակական-տնտեսական ֆորմացիաներում։

Կապիտալիստական հասարակարգում գիտությունը բուրժուազիայի ձեռքում հանդես է գալիս որպես հավելյալ արժեքի արտադրության, հարստացման միջոց, և այդ պատճառով էլ որպես աշխատավոր ժողովրդի շահագործման ու ճնշման գործիք։ Այդտեղ, Մարքսի բնութագրությամբ, «մարդկությունն ամբողջությամբ վերցրած շարունակ ավելի մեծ իշխանություն է ձեռք բերում բնության վրա, մինչդեռ առանձին մարդը մյուս մարդկանց կամ իր սեփական ստորության ստրուկն է դառնում։ Թվում է, որ գիտության մաքուր լույսն անգամ չի կարող այլ կերպ փայլել, քան միայն տգիտության մռայլ ֆոնի վրա։ Մեր բոլոր գյուտերը և մեր ամբողջ պրոգրեսը կարծես թե տանում են դեպի այն, որ նյութական ուժերը հոգեկան կյանք են ստանում, իսկ մարդկային կյանքն իջնում է մինչև բութ նյութական ուժի աստիճանը»[1]։

Նման երևույթը բխում է կապիտալիզմի բուն էությունից, այն բանից, որ այդ հասարակության մեջ հավելյալ արժեքի արտադրությունը, մասնավոր կապիտալիստական շահույթը արտադրության նպատակն է, որին ի սպաս է դրվում մարդկային միտքն ու գործը, տեխնիկան ու գիտությունը։

Գիտության դերն ու նշանակությունը արմատապես փոխվում է սոցիալիզմի պայմաններում։ «Առաջ,— ասել է Վ. Ի. Լենինը,— ամբողջ մարդկային խելքը, նրա ամբողջ հանճարն ստեղծագործում էր նրա համար, որպեսզի մի կարգ մարդկանց տա տեխնիկայի ու կուլտուրայի բոլոր բարիքները, իսկ մյուսներին զրկի ամենաանհրաժեշտից՝ լուսավորությունից ու զարգացումից։ Իսկ այժմ տեխնիկայի բոլոր հրաշքները, կուլտուրայի բոլոր նվաճումները դառնալու են համաժողովրդական սեփականություն և այսուհետև մարդկային խելքն ու հանճարն էլ երբեք բռնության միջոցների, շահագործման միջոցների չեն վերածվի»[2]։

---

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հատ. I, էջ 423։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 589—590։

1

Գիտության անկաշկանդ զարգացման համար պահանջվում է, նախ, այնպիսի արտադրության առկայություն, որն աճում է անշեղորեն ու բարձր տեմպերով, խթանում է գիտական միտքը և ընդունակ է կիրառելու նրա նվաճումները, երկրորդ, այնպիսի հասարակական կարգեր, որոնց ժամանակ գիտությունը դառնում է աշխատավոր ժողովրդի սեփականությունը և նրա զարգացմամբ շահագրգռված է ամբողջ հասարակությունը, և, երրորդ, հասարակության կառավարման այնպիսի սիստեմ, որը շահագրգռված է և ընդունակ կազմակերպելու գիտական աշխատանքը պլանային հիմունքներով, հոգալու նրա զարգացման պահանջները, նրա առջև դնելու այնպիսի խնդիրներ, որոնք բխում են ինչպես գիտության, այնպես էլ հասարակության պրոգրեսիվ զարգացման պահանջներից։

Արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա խարսխված ոչ մի հասարակարգ ի վիճակի չի եղել բավարարելու այդ պահանջները. լավագույն դեպքում այդ հասարակարգերում գիտության զարգացման համար ստեղծվել են մասնակի և սահմանափակ պայմաններ։ Կապիտալիստական հասարակարգում, օրինակ, արտադրության զարգացման պահանջները խթանել են գիտական միտքը, պայմանավորել ժամանակակից գիտության ծագումն ու բարձր զարգացումը, բայց այդ հասարակարգը միաժամանակ կաշկանդել ու կաշկանդում է գիտության ազատ զարգացումը, նետում նրան սոցիալական հակասությունների հեղեղատը, ենթարկում շահագործող դասակարգի շահամոլական նպատակներին։ Այդտեղ գիտությունը չի դառնում ժողովրդի սեփականությունը, ընդհակառակը, նա կտրվում է անմիջական արտադրողից, հանդես գալիս որպես կապիտալի ուժ՝ ուղղված արտադրողի դեմ։ Գիտության զարգացումն ու գիտության կազմակերպումը կրում են տարերային բնույթ, ենթարկվելով կապիտալիստական սիստեմի անարխիային։

Կապիտալիզմի սպասարկուներից մեկը դեռևս անցյալ դարում չարախընդարար նշել էր, որ կապիտալը, գիտությանը ստիպելով ծառայել իրեն, հնազանդության է հարկադրում աշխատանքի խոովարար ձեռքերին։ Արդի կապիտալիզմը ավելի ակնբախ է դարձրել գիտության կապիտալիստական կիրառման այլանդակ հետևանքները։ Մոնոպոլիստական կապիտալը օգտագործում է գիտությունը որպես ժողովուրդների շահագործման ու կեղեքման միջոց, իմպերիալիստական ագրեսիայի ու ավերիչ պատերազմների գործիք, կաշկանդում է գիտության ամեն մի առաջընթաց քայլ, եթե դա օգուտ չի խոստանում իրեն։ Զարաշահելով ու ստրկացնելով գիտությունը, նա հանդես է գալիս հատկապես նրա իմացական նշանակության դեմ, իսկ հասարակական գիտությունների նկատմամբ՝ որպես բացարձակ ու անհաշտ թշնամի։

Գիտության անկաշկանդ, վերընթաց ու բուռն զարգացման վերոհիշյալ պայմանները ստեղծվում են սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի հետևանքով։ Սոցիալիստական գիտության հիմքն ու աղբյուրը, նրա զարգացման որոշիչ գործոնը սոցիալիստական արտադրությունն է, որի բնորոշ գծերից մեկը նրա անարգել ու անշեղ աճն է, զարգացման բարձր տեմպերը։

Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների փորձով ապացուցված է սոցիալիստական արտադրության գերազանցությունը կապիտալիստականի նկատմամբ՝ զարգացման հնարավորությունների ու տեմպերի,

հեռանկարների ու նպատակների և դրանց իրագործման միջոցների տեսակետից։ Սովետական Միությունը մի քանի տասնյակ տարիների ընթացքում անցել է զարգացման մի ուղի, որ կապիտալիստական երկրներն անցել են դարերի ընթացքում։ Արդյունաբերության զարգացման տեմպերը 40 տարվա ընթացքում (1918—1957 թթ.) ՍՍՌՄ-ում կազմել են տարեկան միջին հաշվով 10,1%, իսկ ամենազարգացած կապիտալիստական երկրում՝ ԱՄՆ-ում՝ 3,2%, այսինքն ՍՍՌՄ արդյունաբերության զարգացման տեմպերը գերազանցել են ամերիկականին ավելի քան երեք անգամ։ Զարգացման նույն բարձր տեմպերով է ընթանում ՍՍՌՄ արդյունաբերությունը և հետագա տարիներին, հերքելով բուրժուական տնտեսագետների մի մարգարեություն ևս, ըստ որի իբր այդ բարձր տեմպերը ժամանակավոր երևույթ են և գնալով պետք է իջնեն։ Սոցիալիստական հասարակարգի կարևորագույն օրինաչափություններից մեկը՝ զարգացման բարձր տեմպը սոցիալիստական գիտության արագ զարգացման խթանն է։ Արտադրությունը գիտության առջև դնում է նորանոր խնդիրներ, ապահովում գիտությունը նյութական միջոցներով, լայնորեն կիրառում նրա նվաճումները։

Սոցիալիստական երկրի գիտության պատմությունը ոչ միայն նրա մեծագույն նվաճումների պատմությունն է, այլև դրանց կիրառման, կենսագործման, նյութական արտադրության մեջ և մյուս բնագավառներում դրանց իրացման պատմությունն է։ Հայտնի է, որ գիտական միտքը, չնայած իր համեմատական ինքնուրույնությանը, կիրառում չգտնելու դեպքում թոշնում է ու լճանում, կորցնում անգամ զարգացման ներքին տենդենցները։ Սոցիալիստական հասարակարգում գիտությանն այդպիսի վտանգ չի սպառնում։ Ընդհակառակը, այստեղ գիտության ներքին խթանները, նրա տրամաբանական զարգացումը զուգակցվում են սոցիալական այնպիսի կարևոր հանգամանքների հետ, ինչպիսիք են նրա նվաճումների լայն ու ժամանակին կիրառումը արտադրության մեջ, ամբողջ հասարակության շահագրգռվածությունը գիտության զարգացմամբ, գիտական մտքի բարձր գնահատումը և խրախուսումը հասարակության կողմից։

Նյութական արտադրության մեջ կիրառվելով, գիտությունը դառնում է արտադրողական ուժ, այսինքն մարմնանում է արտադրության գործիքների, տեխնիկայի մեջ, դառնում է արտադրության հոգևոր գործոն և այլն։ Այդ պրոցեսը տեղի է ունեցել և տեղի ունի նաև կապիտալիզմի պայմաններում։ Բայց, նախ՝ սոցիալիզմի ժամանակ գիտության վերածումը արտադրողական ուժի տեղի է ունենում ավելի մեծ չափերով շնորհիվ արտադրության մեջ նրա լայն կիրառման, երկրորդ՝ սոցիալիզմի ժամանակ գիտությունը արտադրության պրոցեսում միանում է անմիջական արտադրողի հետ, հանդես գալով որպես նրա սեփական ուժը, ի հակադրություն կապիտալիզմի, որի պայմաններում գիտությունը անջատվում է անմիջական արտադրողից, դառնում նրա համար իորթ ուժ, և, վերջապես. գիտությունը այստեղ հանդես է գալիս որպես արտադրության կազմակերպման ու պլանավորման միջոց ամբողջ հասարակության մասշտաբով և ոչ թե առանձին ձեռնարկության կամ մոնոպոլիստական միավորման մասշտաբով, ինչպես այդ տեղի ունի կապիտալիզմի պայմաններում։

Գիտության ու արտադրության կապի ուժեղացման, արտադրության մեջ գիտության նվաճումների ներդրման խնդիրը միշտ եղել է և մնում է Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության ուշադրության կենտրո-

նում։ Դա բխում է սոցիալիստական արտադրության զարգացման պահանջներից, աշխատանքի արտադրողականության բարձրացման, տեխնիկական առաջադիմության պահանջներից։

Գիտության և անմեջական արտադրողի մեկացումը սոցիալիստական կարգերի մեծագույն նվաճումներից մեկն է։ Այդպիսի խնդրի ծագումը հնարավոր է միայն նոր, սոցիալիստական տիպի արտադրության առկայության պայմաններում, որի նպատակը հասարակության մշտապես աճող պահանջմունքների բավարարումն է, աշխատավոր ժողովրդի բարեկեցության բարձրացումը, մարդու ֆիզիկական ու հոգևոր ուժերի աճը։

Կապիտալիստական արտադրությունը անմիջական արտադրողին դարձնում է մեքենայի կցորդ, ճնշում ու մեռցնում նրա ընդունակություններն ու ինքնուրույնությունը, կենտրոնացնում արտադրության հոգևոր կողմը առանձին, միայն մտավոր աշխատանքով զբաղվող մարդկանց մոտ, բանվորների գործունեությունը սահմանափակում միապաղաղ, տաղտկալի ու տանջալից ֆիզիկական աշխատանքով։ Այստեղ նախկին աշխատանքը, այդ թվում նաև մտավոր աշխատանքը, որն առարկայացած է աշխատանքի գործիքների, մեքենաների, ամբողջ տեխնիկայի մեջ, ծծում է ու քամում բանվորի ֆիզիկական ու հոգևոր ուժերը. մեռյալ աշխատանքը տիրում է կենդանի աշխատանքին։ Հակառակ պատկեր է ստեղծում սոցիալիստական արտադրությունը։ Այստեղ գիտությունը՝ մարմնանալով արտադրության միջոցների մեջ, ծառայում է աշխատանքի պայմանների բարելավմանը, աշխատանքի թեթևացմանը. արտադրության պրոցեսում գնալով ավելի ու ավելի են մերձենում ֆիզիկական ու մտավոր աշխատանքները. բանվորը դառնում է արտադրության պրոցեսի գիտակից գործիչն ու ղեկավարը։ Արտադրողի գիտական մակարդակի բարձրացումը սոցիալիստական հասարակարգին հատուկ երևույթ է, նրա գերազանցության վառ արտահայտությունը, կոմունիստական աշխատանքին անցնելու պայմաններից մեկը։

Գիտության և արտադրության նման կապն ունի մեծագույն նշանակություն։ Դա արտադրական աշխատանքը դարձնում է հետաքրքիր, բովանդակալից ու ստեղծագործական. բարձրանում է մարդու գիտակցականությունը, նախաձեռնությունն ու արժանապատվությունը։ Այդ մասին են վկայում սոցիալիստական երկրներում լայնորեն ծավալվող նորարարական ու ռացիոնալիզատորական շարժումը, կոմունիստական աշխատանքի ծիլերի բողբոջումը մեր երկրում։ ՍՍՌՄ-ում ներկայումս կան 2 միլիոնից ավելի գյուտարարներ ու ռացիոնալիզատորներ, որոնք միայն 1959 թվականին արել են ավելի քան երկու միլիոն 300 հազար առաջարկություն. դրանցից 2 միլիոնից ավելին ներդրվել է արտադրության մեջ։ Սոցիալիստական կարգերի ծնունդ է հանդիսանում այնպիսի մի բազմախոստում երևույթ, ինչպիսին բանվոր-հետազոտողների շարժումն է։ Արտադրական խոշոր ձեռնարկություններում բանվորներն իրենք են առաջադրում գիտական նշանակություն ունեցող տեխնիկական բարդ խնդիրներ, օգնում գիտական հիմնարկներին ու նրանց հետ միասին վճռում դրանք։

Գիտության ու արտադրության կապն իր մարմնացումն է գտնում կոմունիստական աշխատանքի բրիգադների գործունեության մեջ։ Կոմունիստական աշխատանքի բրիգադների կոչման համար ծավալված մրցության գլխավոր առանձնահատկությունը, ինչպես ընդգծված է մրցության առաջավորների

խորհրդակցությանը ուղղված՝ ՍՄԿՊ Կենտկոմի ողջույնի մեջ, այն է, որ նրա մեջ օրգանապես զուգակցվում են նորագույն գիտության ու տեխնիկայի հիման վրա աշխատանքի ամենաբարձր արտադրողականության հասնելու համար մղվող պայքարը և նոր մարդու դաստիարակությունը, այն մարդու, որ տերն է իր երկրի, որ մշտապես առաջ է նայում, խիզախում է, մտածում, ստեղծագործում։

Գիտության և արտադրության կապի այդպիսի նոր, սոցիալիստական մեթոդների ծագման արմատները գտնվում են սոցիալիստական սիստեմի մեջ, որն անսահման հնարավորություններ է բացել աշխատավորների կուլտուրական ու դիտական մակարդակի բարձրացման համար։ Այժմ Սովետական Միության մեջ ավելի քան երկու միլիոն երիտասարդներ սովորում են երեկոյան դպրոցներում։ Կազմակերպված է ուսուցման լայն ցանց աշխատավորների համար, որտեղ նրանք լրացնում են իրենց ուսման պակասը առանց արտադրությունից կտրվելու։ Այդ ձևով կրթություն են ստանում 2 միլիոնից ավելի մարդիկ երեկոյան և հեռակա բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Խոշոր արտադրական ձեռնարկություններում ստեղծվում են ոչ միայն գիտա-հետազոտական ինստիտուտներ ու լաբորատորիաներ, այլև բարձրագույն ուսումնական հաստատությունների ու տեխնիկումների երեկոյան բաժանմունքներ, ինչպես, օրինակ՝ Մոսկվայի Լիխաչովի անվան ավտոգործարանում, «Ուրալմաշում» և այլն։

Այս բոլորի մեջ իրենց մարմնացումն է գտել Լենինի հանճարեղ կանխատեսումն այն մասին, որ սոցիալիզմը գիտությունը կդարձնի ժողովրդի սեփականությունը, կծառայեցնի աշխատավոր ժողովրդի նյութական ու հոգևոր պահանջմունքների բավարարմանը, նրանց բարեկեցության բարձրացմանը։ Եվ իրոք, բարգավաճող սոցիալիստական գիտությունը իր անգնահատելի դերն է կատարում աշխատանքի պայմանների թեթևացման, նյութական բարիքների արտադրության շեշտակի բարձրացման համար, որի հետևանքով աճում է հասարակական հարստությունը, հետևաբար և ժողովրդի կենսամակարդակը։ Սոցիալիստական երկրի ազգային եկամուտը 1959 թվականին 1913 թվականի համեմատությամբ ավել էր 25 անգամ, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով՝ 16 անգամ։ 1960 թվականին կավարտվի բոլոր աշխատավորների փոխադրումը 7-ժամյա, իսկ ծանր պայմաններում աշխատողների համար՝ 6-ժամյա աշխատանքային օրվա։ 1960 թվականի հոկտեմբերից սկսած աստիճանաբար կդադարեցվի հարկերի գանձումը բնակչությունից։

Գիտության և արտադրության կապն ու համագործակցությունը սոցիալիստական հասարակարգի հզորության և հետագա առաջընթացի պայմաններից մեկն է։

2

Սոցիալիստական հասարակարգը ստեղծում է ոչ միայն գիտության զարգացման օբյեկտիվ պայմաններ, այլև ապահովում է այդ պայմանների ըստ ամենայնի ու ռացիոնալ օգտագործումը գիտական աշխատանքի կազմակերպման, ուսման ձևերի կատարելագործման, գիտական կադրերի պատրաստման միջոցով։

Հայտնի է, որ սովետական ժողովուրդը անցյալից ժառանգել էր տնտեսական ու կուլտուրական տեսակետից հետամնաց մի երկիր, որտեղ բնակչու-

թյան ճնշող մեծամասնությունն անգրագետ էր։ Մինչհեղափոխությունը Ռուսաստանում բարձրագույն ուսումնական հաստատություններում կային ավելի քիչ սովորողներ, քան այժմ ՍՍՌՄ-ում գիտական աշխատողներ։ Երկրի արևելյան շրջաններում կար միայն չորս բարձրագույն ուսումնական հաստատություն, այսինքն ավելի քիչ, քան այժմ միայն Բաշկիրական ԱՍՍՌ-ում։ Գիտությունների ակադեմիան ուներ միայն մեկ ինստիտուտ և մի քանի լաբորատորիաներ։ Ռուսական կայսրության տերիտորիայում բնակվող ժողովուրդների մի մասը չուներ անգամ գիր ու գրականություն, 10 ժողովուրդների տերիտորիաներում, որոնք Սովետական իշխանության տարիներին կազմավորվեցին որպես միութենական ռեսպուբլիկաներ, չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն։

Հաղթանակած հեղափոխության արմատական խնդիրներից մեկը երկրի կուլտուրական հետամնացության հաղթահարումն էր։ Ռեֆորմիստներն ու ռևիզիոնիստները աղմկում էին այն մասին, որ Ռուսաստանում հեղափոխությունը «անժամանակ է» կատարվել, որովհետև այնտեղ չկա կուլտուրայի «բավարար մակարդակ», և գուշակում էին նրա մոտալուտ անկումը։ Վ. Ի. Լենինը ջախջախիչ հարված տվեց այդ «մարգարեներին»։ Նա գրել է. «Եթե սոցիալիզմ ստեղծելու համար պահանջվում է կուլտուրայի որոշ մակարդակ (թեև ոչ ոք չի կարող ասել, թե ո՞րն է այդ որոշ «կուլտուրայի մակարդակը», որովհետև այն տարբեր է արևմտա-եվրոպական պետություններից յուրաքանչյուրի մեջ), հապա ինչո՞ւ մենք չենք կարող սկսել, նախ, հեղափոխությունը ուղիով այդ որոշ մակարդակի համար նախադրյալներ նվաճելուց, իսկ հետո արդեն, բանվորա-գյուղացիական իշխանության և սովետական հասարակարգի հիման վրա, առաջ շարժվել մյուս ժողովուրդներին հասնելու համար»[1]։

Վ. Ի. Լենինը մշակեց ՍՍՌՄ-ում կուլտուրական հեղափոխության վիթխարի ծրագիրը, որի իրագործմամբ սովետական երկիրը դարձավ կուլտուրայի ու գիտության երկիր, ապահովեց իր առաջնությունը համաշխարհային գիտության մեջ։

Շատ վաղուց չէ, որ կապիտալի սպասարկուները մի ինչ-որ անժխտելի փաստ էին համարում, որ սովետական գիտությունը իբր այնքան հետ է մնում զարգացած կապիտալիստական երկրների գիտությունից, որ նա երբեք չի կարող հասնել դրան։ Բայց այդ գուշակությունն էլ իր արժանի տեղը գտավ նրանց բոլոր մյուս ողորմելի գուշակությունների կողքին։ Սովետական գիտությունը մի շարք վճռական բնագավառներում արդեն դուրս է եկել առաջին տեղը աշխարհում, և այժմ դա ստիպված են խոստովանել անգամ կապիտալիզմի պաշտպանները։

Սովետական առաջին արբանյակի արձակումից հետո «ատոմային դիվանագիտության» ոգեշնչողներից մեկը՝ ոչ անհայտ Բարուխը ասաց. «Մեզ հանկարծակի ու կոպիտ կերպով արթնացրին»։ Կապիտալի սպասարկուների մեծ խելքի մասին չի վկայում այն փաստը, որ նրանք ստիպված եղան սթափվելու իրենց իսկ ստեղծած պատրանքներից. լրջմիտ լինելու դեպքում նրանք կհասկանային, որ սովետական գիտության զարգացման պայմաններն ու հնարավորությունները, նրա բնույթն ու ոգին այնպիսին են, որ նա օրինաչափորեն և անխուսափելիորեն պետք է գրավի առաջին տեղը աշխարհում։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 569։

Սովետական գիտությունն ունի իր զարգացման անսպառ աղբյուրը սոցիալիստական կարգերի մեջ, Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության քաղաքականության մեջ, գիտության նկատմամբ այն անսահման հոգատարության մեջ, որով շրջապատում է նրան սովետական ժողովուրդը։

Սովետական գիտության պատմական նվաճումները պայմանավորված էին սովետական ժողովրդի երկարատև ու համառ աշխատանքով, որ ներդրված էր երկրի կուլտուրական զարգացման ընդգավառում, որի հետևանքը կուլտուրական հեղափոխության կենսագործումն էր։ «Մեր ժողովրդի կյանքի վիթխարի փոփոխությունները սերտորեն կապված են կուլտուրական հեղափոխության հաջողությունների հետ,— ասում է Ն. Ս. Խրուշչովը։— Նա ուղի է բացել տաղանդների համար, որոնք, ինչպես ասել է Վլադիմիր Իլյիչ Լենինը, ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են... Ամբողջ աշխարհին են հայտնի սովետական գիտության, տեխնիկայի, արվեստի հիանալի նվաճումները։ Այդ ամենը կուլտուրական հեղափոխության արդասիքներն են։ Մեծ է նրա ճակատը։ Բայց, թերևս, ամենադլխավոր, առաջատար տեղը պատկանում է մեր դպրոցին»[1]։

Սովետական Միությունը ուսման ու գիտության երկիր է։ Սովորողների թիվը երկրում անցնում է 50 միլիոնից, որոնցից 4 միլիոնից ավելին՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ու տեխնիկումներում։ Նա առաջ է անցել բոլոր կապիտալիստական երկրներից մասնագետների պատրաստման տեմպերով։ 753 բուհերը և 3300-ից ավելի տեխնիկումներն ու մյուս միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները պատրաստում են մասնագետներ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի, ժողովրդական լուսավորության, առողջապահության և բոլոր մյուս ընդգավառների համար, համալրում են գիտական աշխատողների կազմը։ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան ընդգրկում է 100-ից ավելի գիտա-հետազոտական ինստիտուտներ, 13 ֆիլիալներ և բազմաթիվ այլ հաստատություններ։ Սովետական իշխանության տարիներին 13 ռեսպուբլիկաներում հիմնադրվել են գիտությունների ակադեմիաներ իրենց գիտա-հետազոտական ինստիտուտներով, լաբորատորիաներով և այլն։ Հայաստանը, որը մինչև ռևոլյուցիան չուներ ոչ մի բարձրագույն գիտական հաստատություն, այժմ ունի 11 բարձրագույն ուսումնական հաստատություն, Գիտությունների ակադեմիա՝ իր գիտա-հետազոտական ինստիտուտներով, որոնց կոլեկտիվները արժեքավոր ներդրումներ են կատարում գիտության մեջ, հատկապես աստղագիտության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի ընդգավառներում։ Գիտությունը ծաղկում է սովետական բոլոր ռեսպուբլիկաներում և հանդիսանում նրանց եղբայրական համագործակցության և փոխօգնության լծակներից մեկը։ Մի երկիր, որտեղ ուսումը խորապես մտել է ժողովրդի կյանքի մեջ, որտեղ ժողովրդի ստեղծած հոգևոր արժեքները պատկանում են իրեն և պետությունը ոչինչ չի խնայում ժողովրդի կուլտուրական աճի համար,— բնականաբար պետք է դառնա և դարձել է գիտության ֆորպոստ։

---

[1] Ն. Ս. Խրուշչով, Կայուն խաղաղություն հանուն ժողովուրդների երջանկության և պայծառ ապագայի։ Շառ ուսուցիչների համառուսաստանյան համագումարում «Սովետական Հայաստան», 10 հուլիսի, 1960 թ.։

Սոցիալիստական հասարակարգը գիտությունը ազատել է սոցիալական հակամարտ հակասություններից ու կապանքներից, կրոնական ու իդեալիստական աշխարհայացքի վնասակար ազդեցությունից և այլ արատներից։

Վերջերս ԱՄՆ-ի դեմոկրատական պարտիայի գործիչներից մեկը, Ֆլորիդայի նահանգապետ Լ. Կոլինսը կշտամբեց ԱՄՆ-ի լուսավորության սիստեմը այն բանում, որ նրա ծրագրերը, ինչպես ասաց նա, հասցրել են մարդկային ռեսուրսների վատնման և միլիոնավոր պատանիների տհասության։ Բայց կապիտալիստական գործիչները չեն հասկանում և չեն ուզում հասկանալ կամ խոստովանել, որ մարդկային ռեսուրսների վատնումը միայն ամերիկյան լուսավորական սիստեմի արատը չէ, այլ ամբողջ կապիտալիստական սիստեմի արատներից մեկը, սիստեմ, որն արատավոր է իր բուն էությամբ և անզոր է մրցելու բարձրացող սոցիալիստական հասարակարգի հետ, նրա գիտության ու կուլտուրայի հետ։

Սովետական հասարակարգում գիտության զարգացումը խարսխված է հասարակության պլանաչափ զարգացման օրենքի վրա և բխում է նրա պահանջներից։ Գիտության պլանավորման մեջ դրսևորվում են նրա զարգացման հիմնական տենդենցները, ուղղությունը, ուշադրության կենտրոնացումը գիտական այն պրոբլեմների լուծման վրա, որոնք առաջնահերթ ու կարևոր նշանակություն ունեն հասարակության առաջընթացի համար, գիտական հետազոտությունների կոորդինացումը և այլն։ Գիտության զարգացման արմատական հարցերը, գիտական հետազոտություններին նյութական միջոցներ տրամադրելը մտնում են երկրի ժողովրդական անտեսության զարգացման պլանի մեջ։ Այսպես, օրինակ, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 7-ամյա պլանում հատուկ տեղ է տրված գիտության խնդիրներին ու հեռանկարներին։ Գիտության բոլոր ճյուղերի արագ զարգացման նպատակով պլանով նախատեսվում է խոշոր միջոցներ տրամադրել գիտական նոր հիմնարկությունների կառուցման, ինստիտուտներն ու լաբորատորիաները նորագույն սարքավորումներով զինելու համար, կենտրոնացնել գիտական ուժերն ու միջոցները կարևորագույն հետազոտությունների բնագավառում, որոնք ունեն տեսական ու գործնական նշանակություն։ «Բնագիտության մեջ,— արձանագրված է XXI համագումարի որոշման մեջ,— առաջատար տեղը գրավում են ֆիզիկական գիտությունները, որոնց հաջող զարգացումից է կախված հարակից գիտությունների և ժողովրդական տնտեսության առաջընթացը։ Տեխնիկական առաջադիմության հետագա հեռանկարները ներկայումս որոշվում են ամենից առաջ ֆիզիկական գիտության հիմնական ուղղությունների նվաճումներով։ Սովետական ֆիզիկոսների ջանքերը կկենտրոնացվեն կոսմիկական ճառագայթների, միջուկային ռեակցիաների, կիսահաղորդիչների պրոբլեմների մշակման վրա»[1]։ Պլանով նախատեսված են նաև մյուս գիտությունների զարգացման արմատական խնդիրները։

Գիտության համար կարևոր նշանակություն ունի այն փոխգործողության բնույթը, որ գոյություն ունի մի կողմից գիտության և, մյուս կողմից աշխարհայացքի, տվյալ ժամանակի ամբողջ դաղափարախոսության ու առհասարակ հասարակության վերնաշենքի միջև։ Շահագործողական հասարակու-

[1] «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերը», Հայպետհրատ, 1959, էջ 127։

թյուններում գիտության և գաղափարախոսության կապը խճճված է հակասական տենդենցներով, հակադրություններով և այլն, որոնց մեջ արտացոլվում և արտահայտվում են հասարակության կյանքի անտագոնիստական հակասություններն ու պայքարը։ Սոցիալիստական հասարակարգը գիտությունն ազատել է ռեակցիոն գաղափարների և հիմնարկությունների վնասակար ու կաշկանդիչ ազդեցությունից, պայմաններ է ստեղծել գիտության ու գիտական աշխարհայացքի օրգանական միասնության, փոխգործողության ու փոխադարձ պայմանավորվածության համար։ Գիտության ու գիտական աշխարհայացքի՝ դիալեկտիկական մատերիալիզմի միասնությունը բխում է նրանց զարգացման պահանջներից, բարերար ազդեցություն է գործում մեկի և մյուսի զարգացման վրա, արտահայտում նրանց հասարակական դերի ու նպատակների ընդհանրությունը։

Սոցիալիստական հասարակարգում ստեղծվել է նոր տիպի փոխհարաբերություն քաղաքական ու գաղափարական վերնաշենքի ու գիտության միջև։ Գիտության զարգացման ռեալ հնարավորությունները, նրա նվաճումների գործնական կիրառման արդյունավետ միջոցներն ու մեթոդները իրականացնում է սոցիալիստական հասարակարգի վերնաշենքը, որը գիտության զարգացման կարևորագույն գործոնն է հանդիսանում հենց այն պատճառով, որ ինքն էլ խարսխված է գիտության վրա։ Գիտության զարգացման մեջ սոցիալիստական վերնաշենքի դերը ամենից առաջ դրսևորվում է Կոմունիստական պարտիայի ղեկավար և ուղղություն տվող գործունեության մեջ, սոցիալիստական պետության շինարարական ու կազմակերպչական ֆունկցիաների մեջ։ Սովետական գիտությունը զարգանում է պարտիայի ու պետության ամենօրյա հոգատարության պայմաններում։

Սովետական գիտության մեծ հաղթանակները՝ ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու միջոցի բացահայտումը, տիեզերական տարածության նվաճման սկզբունքների մշակումը, մատերիայի նորանոր հատկությունների հայտնաբերումը, տեխնիկական առաջադիմության տեսա-վերնաշենքի դերը ամենից առաջ դրսևորվում է Կոմունիստական պարտիայի տիայի և Սովետական պետության քաղաքականության շնորհիվ, որն ուղղում է առաջավոր միտքը դեպի նորանոր խիզախումներ ու սխրագործություններ։ Սովետական գիտությունը պատվով է կատարում իր դերն ու խնդիրները, որ նրա առջև դնում են սովետական ժողովուրդը, Կոմունիստական պարտիան ու Սովետական պետությունը։ «Սովետական երկիրը,— ասված է ՍՄԿՊ XXI համագումարի բանաձևում,— գիտա-տեխնիկական մտքի ասպարեզում իր հոյակապ հաղթանակներով նոր դարաշրջան բացեց աշխարհի ճանաչողության գործում։ Այդ հաղթանակների մեծ նշանակությունն այն է, որ դրանք ցուցադրեցին սոցիալիզմի ստեղծարար հզոր ուժերը, որոնք գործում են հօգուտ մարդկության, նրա առաջադիմության ու բարգավաճման։ Բոլոր սովետական մարդիկ լի են հայրենասիրական հպարտությամբ իրենց Հայրենիքի համար, որը գլխավորում է համաշխարհային գիտա-տեխնիկական առաջընթացը և համարձակորեն ուղիներ է հարթում դեպի ապագան»[1]։

[1] ՍՄԿՊ XXI համագումարի բանաձևը։ Հայպետհրատ, 1959, էջ 9 – 10։

3

Սովետական ժողովուրդը, հենվելով իր հերոսական ու ստեղծարար աշխատանքով ձեռք բերած պատմական նվաճումների վրա, ձեռնամուխ է եղել կոմունիստական հասարակարգի վերջ իդեալների կենսագործմանը։ Անցնելով ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանի կատարմանը, սովետական երկիրը մտավ կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը, որն իր խնդիրների վիթխարիությամբ հավասարը չունի պատմության մեջ։ Յոթնամյակի ընթացքում Սովետական Միությունը կրկնապատկելու է ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերը, այսինքն ստեղծելու է այնքան, որքան ստեղծել է մեր երկիրը իր ամբողջ պատմության ընթացքում։ Այդ խնդրի կենսագործմանն է նվիրաբերում սովետական ժողովուրդը իր ամբողջ եռանդը, ստեղծագործ աշխատանքն ու միտքը, գիտության նվաճումներն ու կարողությունները։

Կոմունիստական հասարակության կառուցման վճռական օղակը նրա նյութա-տեխնիկական բազայի ստեղծումն է։ Այդ բազան մեքենայացված ու ավտոմատացված հզոր արդյունաբերությունն է, որն ընդունակ է ապահովելու աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն, նյութական բարիքների ավելի մեծ քանակություն, քան կապիտալիստական արտադրությունը։ «Կոմունիզմը,— ասում է Ն. Ս. Խրուշչովը,— կարելի է իրականացնել միայն այն պայմանով, եթե մենք գերազանցենք կապիտալիստական զարգացած երկրների արտադրության մակարդակը, ապահովենք աշխատանքի նոր, շատ ավելի բարձր արտադրողականություն, քան կապիտալիզմի օրոք»[1]։

Յոթնամյակի արմատական պրոբլեմը՝ կապիտալիզմի հետ տնտեսական մրցության մեջ առավելագույն չափով ժամանակ շահելու խնդիրը լուծել կարելի է միայն տեխնիկական առաջադիմության տեմպերի ըստ ամենայնի բարձրացման և այդ հիման վրա աշխատանքի արտադրողականության աճման միջոցով։ Սովետական գիտության առաջնահերթ խնդիրը ներկա ժամանակամիջոցում տեխնիկական առաջադիմության տեմպերի բարձրացման ապահովումն է, որի կենսագործման համար գիտությունից պահանջվում է ժամանակին մշակել տեխնիկական առաջադիմության տեսական սկզբունքները և դրանց պրակտիկ կիրառման միջոցները։

Յոթնամյա պլանի կատարման մեկ և կես տարվա արդյունքները ցույց են տալիս սովետական գիտության աճող դերը տեխնիկական առաջադիմության գործում։ Այդ ժամանակաշրջանում զգալիորեն աճել են գիտական հետազոտությունների ծավալը, նախագծային, կոնստրուկտորական և էքսպերիմենտալ աշխատանքները։ Ստեղծվել են մեքենաների և ապարատների 2300-ից ավելի նոր կարևորագույն նմուշներ, ներդրված են արտադրության մեջ ավելի քան 2000 հոսքային, կոնվեյերային ավտոմատ և կիսաավտոմատ գծեր, լայն չափերով մոդեռնացվում են տեխնիկան ու տեխնոլոգիան, հին կոնստրուկցիայի ավելի քան 1000 տիպի մեքենաներ ու մեխանիզմներ հանվել են արտադրությունից և փոխարինվել նորերով։ Ուժեղանում և ամրապնդվում են գիտահե-

[1] Ն. Ս. Խրուշչով. ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերի մասին։ Զեկուցում ՍՄԿՊ XXI արտահերթ համագումարում Հայպետհրատ, 1959, էջ 134։

տագոտական հիմնարկությունների և արտադրական ձեռնարկությունների կապն ու համագործակցությունը։

Ուկրաինական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ե. Օ. Պատոնի անվան էլեկտրաշողման ինստիտուտը մշտական գործարար կապեր է պահպանում ավելի քան 900 գործարանների, կառույցների ու նախագծային կազմակերպությունների հետ, ընդ որում արտադրության մեջ ներդնելու ուղղությամբ ինստիտուտի հետազոտությունների ու աշխատանքների մինչև 60 տոկոսը կատարվում են արտադրական ձեռնարկությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն։ Դա պատահական օրինակ չէ, այլ սովետական գիտության և արտադրության կապի վառ արտահայտություններից մեկը։ «Տեխնիկական պրոգրեսը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում անխզելիորեն կապված է սովետական գիտության հաջողությունների, մեր գիտնականների աչքի ընկնող նվաճումների հետ»[1], արձանագրեց ՍՄԿՊ Կենտկոմի 1960 թվականի Հուլիսյան պլենումը։

Տեխնիկական առաջադիմության հաջողությունները, այսպիսով, միաժամանակ սովետական գիտության հաջողություններն են, նրա պրակտիկ դերի դրսևորումը ժողովրդական տնտեսության զարգացման պլանների կատարման ու դերակատարման մեջ։ Յոթնամյակի առաջին տարում ՍՍՌՄ արդյունաբերության համախառն արտադրանքը նախորդ տարվա համեմատությամբ աճեց 11 տոկոսով՝ պլանով նախատեսված 7,7 տոկոսի դիմաց, իսկ 1960 թվականի առաջին կեսին՝ ավելի քան 10%-ով՝ պլանով նախատեսված 8,1 տոկոսի դիմաց։ Այս տվյալները ցույց են տալիս, որ սովետական երկիրը յոթնամյա պլանը կատարելու է ժամանակից շուտ։ Կարճ ժամանակամիջոցում համաշխարհային սոցիալիստական սիստեմը դրսևորելու է իր դերաղանցությունը նյութական արտադրության մեջ՝ մարդկային գործունեության վճռական բնագավառում, ետ թողնելով կապիտալիստական երկրներին արտադրանքի ընդհանուր ծավալով։ Դա կլինի սոցիալիստական սիստեմի տնտեսական հզորության նոր ապացույցը, ինչպես և գիտական մտքի մեծ հաղթանակը կապիտալիզմի հետ մրցության մեջ։

Բայց զարգացող հասարակությունը չի կարող բավարարվել գիտական մտքի արդեն ձեռք բերած նվաճումներով, ինչքան էլ որ դրանք ծանրակշիռ ու նշանակալից լինեն։ Եվ, համապատասխանաբար, զարգացող գիտությունը իր նվաճած մակարդակը չի կարող դիտել որպես մի անանցանելի սահման. ընդհակառակը, գիտական ամեն մի նոր հայտնագործություն նոր հայտնագործությունների նախապայմանն է, ամեն մի նվաճած սահմանագիծ՝ նոր նվաճումների ելակետը։ Դա զարգացող գիտության օրենքն է, որն այնքան ավելի լայնորեն է դրսևորվում, որքան ավելի մեծ պահանջներ է ներկայացնում գիտությանը զարգացող հասարակությունը և պայմաններ ստեղծում նրա ծավալման համար։ Անցյալում ոչ մի պատմական դարաշրջան գիտության առջև չի դրել այնպիսի ինգիրներ, ինչպես մեր երկրում ներկայումս՝ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում։ Անհամեմատ բարձրա-

[1] ՍՄԿՊ XXI համագումարի՝ արդյունաբերության, տրանսպորտի զարգացման և արտադրության մեջ գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների ներդրման վերաբերյալ որոշումների կատարման ընթացքի մասին։ ՍՄԿՊ Կենտկոմի պլենումի որոշումը։ «Սովետական Հայաստան», 18 հուլիսի, 1960 թ.։

ցել է գիտության գործնական դերը, բայց դա բնավ չի նշանակում գիտության ուտիլիտարացում, ինչպես ճգնում են պատկերել սովետական գիտությունը բուրժուական գաղափարախոսները։ Իրականում կապիտալիզմն է գիտության դերը սահմանափակում ուտիլիտար պահանջների կատարմամբ, թերագնահատում, կեղծում ու այլանդակում նրա իմացական նշանակությունը, հոռետեսորեն նայում նրա ապագային։ Սոցիալիստական հասարակարգը հոգում է ոչ միայն գիտության այսօրվա պահանջները, այլև նրա ապագայի մասին, գնահատում ոչ միայն նրա այն նվաճումները, որոնք անմիջականորեն ներդրվում են արտադրության մեջ, այլև այն հետազոտությունները, որոնք դեռևս զուտ տեսական նշանակություն ունեն։ Գիտության պատմությունը ապացուցում է, որ գիտական արժեք ներկայացնող ամեն մի տեսական հետազոտություն ժամանակին անպայման կդրսևորի իր գործնական նշանակությունը։

Սովետական գիտությունը նայում է առաջ, զբաղվում տեսական խոշոր նշանակություն ունեցող հետազոտություններով, որոնք պետք է գառնան վերահաս տեխնիկական բարեփոխությունների, վաղվա տեխնիկայի տեսական բազան։ Գիտական բազմաթիվ պրոբլեմներ գտնվում են տեսական հետազոտման պրոցեսում և դրանց լուծումը արմատական փոփոխություններ կմտցնի արտադրության մեջ։ Տեսական ֆիզիկան, մաթեմատիկան, կիբեռնետիկան, քիմիան և այլ գիտություններ նախապատրաստում են միջուկային էներգիայի, էլեկտրոնային մեքենաների, ավտոմատիկայի, կիսահաղորդիչների լայն ու բազմակողմանի գործադրումը։

Սոցիալիստական հասարակարգում, ավելի քան երբևէ անցյալում, աճել ու աճում է գիտության ճանաչողական, աշխարհայացքային դերը։ Սոցիալիզմից է սկսվում այն դարաշրջանը, երբ մարդիկ գիտակցաբար են կերտում իրենց պատմությունը, երբ, ինչպես կանխատեսել էր Էնգելսը, պատմության վրա մինչ այդ իշխող օբյեկտիվ, խորթ ուժերը ընկնում են մարդու վերահսկողության տակ։ Իսկ մարդիկ կարող են գիտակցաբար կերտել իրենց պատմությունը միայն այն դեպքում, երբ նրանք ճանաչում են բնության ու հասարակության զարգացման օրենքները, ելնում նրանց պահանջներից, կազմակերպում արտադրությունն ու ամբողջ հասարակական կյանքը՝ հենվելով գիտության տվյալների վրա, առաջնորդվելով գիտությամբ։

Գիտությունը սոցիալիզմի ժամանակ ձեռք է բերում այնպիսի դեր ու նշանակություն, որպիսին նա չէր կարող ունենալ նախկին հասարակարգերում։ Նրա հիման վրա մշակվում է գիտական քաղաքականություն, կանխատեսվում իրադարձությունների ընթացքն ապագայում, պլանավորվում տնտեսությունը։ Իրականացվել է Վ. Ի. Լենինի հայտնի պրոյեկտը, որ «...միայն սոցիալիզմը կազատի գիտությունը բուրժուական կապանքներից, կապիտալին ստրկանալուց, կեղտոտ կապիտալիստական շահասիրությանը ստրկանալուց։ Միայն սոցիալիզմը հնարավորություն կտա պրոդուկտների հասարակական արտադրությունն ու բաշխումը լայնորեն տարածել և գիտական նկատառումներով իսկապես ենթարկել այն նպատակին, թե ինչպես բոլոր աշխատավորների կյանքը դարձնել առավել հեշտ, այնպես, որ նա բարեկեցության հնարավորություն ընձեռի աշխատավորներին»[1]։

[1] Վ. Ի. Լենին. Երկեր. հատ. 27, էջ 511։

Կոմունիստական հասարակության կառուցման վիթխարի ծրագիրը գիտականորեն հիմնավորված ծրագիր է։ Դա խարսխվում է հասարակության զարգացման օրենքների իմացության վրա, այն բոլոր նվաճումների վրա, որ ձեռք է բերել սովետական ժողովուրդը բոլոր բնագավառներում, այդ թվում և գիտության մեջ, որի դերը գնալով ավելի ու ավելի է մեծանում։ Կոմունիզմի կառուցումը ժողովրդի գիտակցական ստեղծագործությունն է, այն իրականացվում է Կոմունիստական պարտիայի փորձված ղեկավարությամբ, որը մշակել է գիտական քաղաքականություն և իր գործունեության մեջ ելնում է մարքսիզմ-լենինիզմի ամենաազդեցիկ գիտությունից։ Գիտությունը կոմունիզմի կառուցման հզոր գործոններից մեկն է։

* * *

Ժամանակակից հասարակությունը պառակտված է երկու հակադիր սիստեմների՝ սոցիալիստական և կապիտալիստական։ Զարգացող սոցիալիստական սիստեմը լի է ստեղծագործական ուժերով, վեհ իդեալներով և պայծառ հեռանկարներով։ Նա բերում է ժողովուրդներին խաղաղություն, բարեկամություն, նյութական ու հոգևոր ուժերի ծաղկման անսահման հնարավորություն։ Կապիտալիստական սիստեմը սպառել է իր զարգացման տվյալները, դարձել մեծագույն չարիք ժողովուրդների համար։ Նա կաշկանդում է մարդու ստեղծագործ միտքը, գիտական մտքի մեծագույն նվաճումներն ուղղում աշխատավոր մարդկության դեմ։ Գիտությունը դուրս է եկել այն նեղ շրջանակներից, որոնց մեջ նրան խցկել էր կապիտալիզմը։ Բայց ինչպես մարդկության ամենամի կարևոր նվաճում, գիտությունը ևս, մարդկային իմացական գործունեության, քաղաքակրթության այդ մեծարժեք արգասիքը, պետք է պատկանի նրան, ով նրա իսկական ստեղծողն է, գնահատողը և առաջադիմական նպատակներով կիրառողը՝ աշխատավոր ժողովրդին։

Սովետական ժողովուրդը նոր դարագլուխ է բացել գիտության զարգացման և լայն կիրառման համար՝ հօգուտ հասարակական առաջադիմության, մարդկության երջանկության։ Առաջավոր գիտությունը դարձել է սոցիալիստական լագերի բոլոր ժողովուրդների բարեկամության ու համագործակցության կարևորագույն գործոններից մեկը։ Նա դառնալու է ամբողջ մարդկության սեփականությունը, բոլոր ժողովուրդների բարեկամության ու եղբայրական համագործակցության գործոնը։

УСЛОВИЯ РАЗВИТИЯ НАУКИ И ЕЕ РОЛЬ В СОЦИАЛИСТИЧЕСКОМ ОБЩЕСТВЕ

А. М. ТЕЛУНЦ

(Резюме)

Возможности развития науки, методы и способы ее применения, а следовательно, ее роль и значение неодинаковы в разных общественно-экономических формациях. В противоположность капитализму, при котором наука превращается в орудие производства прибавочной стоимости, в орудие капитала, противостоящее труду, социалистическое общество пре-

вращает науку в достояние народа, в средство общественного прогресса, важный рычаг для поднятия благосостояния трудящихся.

Для всестороннего, мощного и беспрепятственного развития науки требуются: развивающееся производство, нуждающееся в науке и ее применении; такие общественные условия, при которых развитием науки и применением ее достижений заинтересовано все общество, весь народ; наличие такой системы организации общества, при которой обеспечивается плановое развитие науки, рациональная организация научной работы, подготовка в широких масштабах научных работников и т. п. При социализме превращение науки в производительную силу происходит в более широких масштабах, чем когда-либо раньше; наука соединяется с непосредственным производством, в противоположность капитализму, где наука отрывается от производства, превращаясь в фактор, чуждый и противоположный производителю.

Социалистическое общество обусловило появление новых форм связи между наукой и производством. Это ярко проявляется в таких, присущих социализму, явлениях, как движение новаторов и рационализаторов, рабочих-исследователей, в замечательном патриотическом начинании бригад коммунистического труда, сочетающих борьбу за наивысшую производительность труда (на основе новейших достижений техники и науки) с воспитанием нового человека.

Громадные успехи и победы советской науки были подготовлены культурной революцией. Советская наука, как отметил XXI съезд КПСС, открывая своими победами новую эпоху в познании мира, продемонстрировала могучие созидательные силы социализма, действующие в интересах человечества, его прогресса и процветания. Наука является могучим фактором построения коммунистического общества. Роль советской науки не исчерпывается обслуживанием непосредственных потребностей развития производства; она своими теоретическими исследованиями подготовляет технику завтрашнего дня. Развивающееся производство не может довольствоваться уже приобретенными достижениями науки; оно стимулирует рост науки, ставит перед ней все новые задачи, а наука не может рассматривать свои достижения как предел познавательной мощи человеческого разума. По мере продвижения общества вперед возрастает и познавательная роль науки, ибо построение коммунизма является *сознательным* творчеством народных масс.